ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1.Անուն Ազգանուն

Արսեն Թորոսյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարար

3. Գործուղման վայրը և ժամկետները

Ուզբեկստանի Հանրապետություն, Տաշքենդ, 2019 թ. հունիսի 3-4

4. Հրավիրող կողմը

Ուզբեկստանի Հանրապետության առողջապահության նախարարություն

5. Գործուղման նպատակը

Հանդիպում Ուզբեկստանի Հանրապետության առողջապահության նախարարի հետ, փոխգործակցության ուղղությունների քննարկում, երկու երկրների առողջապահության նախարարությունների միջև առողջապահության բնագավառում համագործակցության մասին համաձայնագրի ստորագրում:

6. Քննարկված թեմաները

Ուզբեկստանի Հանրապետության առողջապահության նախարարի հետ հանդիպման ընթացքում խոսել ենք երկու երկրների առողջապահական համակարգերի և վերջիններիս ընդհանուր գծերի, ինչպես նաև ներկայում գոյություն ունեցող խնդիրների մասին: Քննարկել ենք առողջապահության այն ուղղությունները, որոնցում համագործակցությունը հետաքրքրություն է ներկայացնում երկու կողմերի համար, մասնավորապես՝ շարունակական մասնագիտական կրթության, դեղերի որակի վերահսկման, առողջապահական ծառայությունների բարելավման, հիգիենիկ-հակահամաճարակային հսկողության և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք այլ ոլորտներ: Միաժամանակ քննարկվել են երկու երկրների բժշկական հաստատությունների միջև ուղիղ կապեր

ստեղծելու, մասնագիտական գիտելիքների և փորձի փոխանակման հնարավորությունները:

7.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Ուզբեկստանի առողջապահության նախարարի և նախարարության գործընկերների հետ հանդիպումներից բացի, ուզբեկական կողմը այցեր էր կազմակերպել Ուզբեկստանի ակադեմիկոս Վ.Վահիդովի անվան վիրաբուժության հանրապետական կենտրոն, ինչպես նաև մասնավոր բազմապրոֆիլային բժշկական կենտոն, որտեղ տեղում ծանոթացել ենք ուզբեկ գործընկերների գործունեությանը, վերջիններիս ձեռքբերումներին և խնդիրների լուծման ձևերին, քննարկել ենք հնարավոր փոխգործակցության ուղղությունները:

8. Հանդիպման կամ նիստերի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Այցի շրջանակներում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և Ուզբեկստանի Հանրապետության առողջապահության նախարարության միջև առողջապահության բնագավառում համագործակցության մասին» Համաձայանագիր:

9. Առաջարկությունները

Ուզբեկստանի առողջապահության նախարար Ա.Շադմանովին հրավիրել եմ այցելել Հայաստան՝ առողջապահության բնագավառում երկու երկրների միջև համագործակցությունն ավելի խորացնելու և գործնական հիմքերի վրա դնելու նպատակով:

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝ 08 հունիսի 2019 թ.

X _____